ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«25» մարտի 2026թ. N ՄՈ/166-Ա

ք. Արմավիր

## «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳՈՀԱՐ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 29-ի N109-Ն որոշումը և Գոհար Գյուլբեկյանի 2026 թվականի մարտի 20-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Գոհար Գյուլբեկյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի ապրիլի 13-ից 17-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գոհար Գյուլբեկյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Անի Հովհաննիսյանին:
3. 2026 թվականի ապրիլի 13-ից 17-ը ներառյալ «Վաղարշապատի Մ.Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Անի Հովհաննիսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գոհար Գյուլբեկյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվական ապրիլի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ